ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԲՆՈՅԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ (1824-1870 թուականներ)

XIX դարի սկզբին Կովկասի կեդրոն համարուող Թիֆլիսը իր հայ բնակիչներով նոյնպէս լուսաւորութեան կարիք ունէր, քանի որ ոչ միայն զգալապէս հայերով բնակեցուած քաղաքում, ինչպէս հայերի, այնպէս էլ վրացիների եւ այլազգիների համար բարձր տիպի դպրոցներ չկային, կրթութիւնը իրականացւում էր լաւագոյնս ծխական դպրոցների մակարդակով եւ նոր-նոր ռուսական ազդեցութեամբ մի քանի դասեայ դպրոցների հիմնադրմամբ։ Համընդհանուր կրթութեան համար պակասում էին կըրթուած ուսուցիչները, պակասում էին պարզագոյն դասագրքերը։ Նման իրավիճակը ստիպել է Վրաստանի Հայոց թեմի նորանշանակ առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոս Աշտարակեցուն թեմի ղեկավարման գործն սկսելու պայմաններից մէկը դարձնել դպրոցի ստեղծումը, որը նախ իրականացրեց փոքրաթիւ աշակերտներով ծխական դպրոցի ստեղծմամբ, ապա բարձր տիպի հոգեւոր դպրոցի ստեղծմամբ, ինչպէս նաեւ տպարանի հիմնադրմամբ։ 1823 թուականին նորաբաց տպարանը հրատարակեց առաջին գիրքը։ 1824-1870-ական թուականներին գործարկուել են նաեւ այլ տպարաններ։ Թիֆլիսի հոգեւոր դպրոցի տպարանը ստեղծուած լինելով եկեղեցու հովանու տակ, հոգեւոր բնոյթի գրականութեան հրատարակչական գործը պիտի առանձնայատուկ կատարէր։ Այս եւ մինչեւ 1870 թուականը ստեղծուած միւս տպարանները բաւականաչափ աշխատանք են կատարել հայերէն լեզուով հոգեւոր գրականութեան տպագրութեան եւ հասարակութեան հոգեւոր կրթութեան պահանջների բաւարարման ուղղութեամբ։ Հինգ տպարաններ այդ ուղղութեամբ ներդրում են ունեցել։

Ներսիսեան Հոգեւոր Դպրոցի Տպարան

Հիմնադրելով տպարանը Ներսէս Արրքեպիսկոպոսն անմիջապէս տեսաւ թէ ինչ լուրջ գործիք է այն կրթութեան եւ լուսաւորութեան տարածման գործում եւ դրանից լիուլի օգտուեց՝ առաջիկայ 3-4 տարում հրատարակելով տասից աւելի գիրք, որոնցից միայն երկուսն էին խիստ հոգեւոր բնոյթի։ Դրանցից առաջինը իր թեմի քահանաներին ուղղուած հրահանգներ էին, միւսը սգաւորների տէրերին առաջադրուող պահանջներին էր վերաբերում։ Միւս գրքերը հրապարակախօսական բնոյթի գրուածքներ էին եւ արտայայտում էին նրա մօտեցումները ժամանակի խնդիրներին։

*Հոգեւոր բնոյթի գրականութեան տպագրութիւնը կանոնաւորուեց 1824 թուականին Ներսիսեան հոգեւոր դպրոցի տեսուչ նշանակուած մանկավարժ, բանաստեղծ, թարգմանիչ Տէր Յարութիւն Քահանայ Ալամդարեանի կողմից։ Նա նաեւ նշանակուել է դպրոցի կրօնի դասատու եւ փաստացի տեսել է դասագիրք ունենալու անհրաժեշտութիւնը։ Բացը լրացնելու համար նա ռուսերէնից թարգմանել ու հրատարակել է «**Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ**» գիրքը[1]։ Այն հրատարակուել է 600 օրինակ տպաքանակով։ Սրբազանը*

[1] Հրահանգ Քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ։ Թարգմանութիւն։ (Թարգմ. Յարութիւն Ալամդարեան)։ Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1825 թ., 294 էջ։

գնահատելով Տէր Յարութիւն քահանայի աշխատանքը, նաեւ այն, որ վերջինս աշխատել է առանց վարձատրութեան, գրքի 300 օրինակ նուիրել է նրան՝ վաճառքի նպատակով։ Գիրքը ծառայել է իր նպատակին եւ 1847 թուականին վերահրատարակուել է։

Հոգեւոր բնոյթի առաջին գիրքը, որ 1825 թուականին տպագրուել է Սաղմոսարանն է։ Ալեքսանդր Երիցեանցը[2] գրել է, որ այն տպագրուել է բաւականին մեծ, 2000 տպաքանակով։

Տէր Յարութիւն Քահանայ Ալամդարեանն է խմբագրել եւ հրատարակել IV դարի Ընդհանրական եկեղեցու նշանաւոր հայրապետներից Եփրեմ Ասորու «**Սրբոյ հօրն մերոյ Եփրեմի Խուրին Ասորւոյ Գիրք աղօթից**»[3] գիրքը։

Տպարանի վերաբացումից՝ 1840-ական թուականների սկզբից, հրատարակուել են Աւետարան, Սաղմոս Դաւթի, Առաջին կանոն Սաղմոսի, Ժամգիրք ատենի, Համառօտութիւն Նոր Կտակարանի, Քրիստոնէական նախագիտելիք, Տաղարան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Խորհրդատետր սրբազան պատարագի, Նոր Կտակարան Սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի[4] գրքերը։

Տպարանի ղեկավարութիւնը ուշադրութիւն է դարձրել Հայոց եկեղեցու գլուխ գտնուող անձանց ու հրատարակել է նրանց գործերը։ 1850-1860-ական թուականներին տպարանը հրատարակել է Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի երեք գիրք։ Դրանցից երկուսը աւելի վաղ տպագրուած «**Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ**»[5] գրքի թիֆլիսեան 1856 եւ 1860 թուականների հրատարակութիւններն են։ Այս գրքում Հայոց եկեղեցու ջատագով կաթողիկոսի երկասիրութիւնն ուղղուած է պապականութեան դէմ եւ պատասխան է Մխիթարեան այն հեղինակներին, ովքեր Հայ եկեղեցին համարել են հերձուած եւ հերետիկոս։ Հայոց կաթողիկոսի միւս «**Բարի մարդ եւ բարի քրիստոնեայ**»[6] գիրքը եւս աւելի վաղ հրատարակուել էր։ Այս երկասիրութիւնը եւս հակաճառութիւն է կաթոլիկութեան եւ բողոքականութեան դէմ։

Տպարանը հրատարակել է նաեւ այլ հեղինակների գրքեր։ Երկուական գիրք են տպագրել Ներսիսեան հոգեւոր դպրոցի ուսուցիչներ Յակովբ Կարենեանցը, Առաքել Արարատեանցը, դպրոցի տեսուչ Տէր Յովսէփ Աւագ Քահանայ Օրբելին։ Այս հեղինակ-

---

[2] **Ա. Երիցեանց**, Ներսիսեան հոգեւոր դպրոց, 1824-1899, Թիֆլիս, 1899 թ., էջ 126։

[3] **Եփրեմ Խուրի Ասորի**, Սրբոյ հօրն մերոյ Եփրեմի Խուրին Ասորւոյ Գիրք աղօթից։ Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1825 թ., 106 էջ։

[4] Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Թիֆլիս, տպ. Հոգեւոր դպրոցի Հայոց, 1842 թ., 299 էջ։ Սաղմոս Դաւթի, որ է աղօթք և օրհնութիւն առ աստուած և մարգարէութիւն վասն մարդեղութեանն Քրիստոսի։ Թիֆլիս, տպ. Ճեմարանի Հայոց, 1844 թ., 491 էջ։ Առաջին կանոն Սաղմոսի, բաժանեալ ի հոգենայս, ի պէտս դեռավարժից։ Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1850 թ., 48 էջ։ Ժամագիրք ատենի արարեալ սուրբ եւ աստուածաշնորհ թարգմանչացն Սահակայ եւ Մեսրովպայ եւ երանելի Հայրապետացն մերոց Գիւտոյ եւ Յովհաննու Մանդակունւոյ եւ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1852 թ., 203 զարդափակ էջ։ Համառօտութիւն Նոր Կտակարանի։ Մասն Առաջին։ Ի մարդեղութենէն Քրիստոսի ցգալուստն Հոգւոյն Սրբոյ։ Տըպագր. Տիտղեարնի սովետնիկ Յովսեփայ Յովհաննիսեան էֆենդեանց։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1854 թ., 79 էջ։ Քրիստոնէական նախագիտելիք։ Գիրք 3-րդ։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1855 թ., 63 էջ։ Տաղարան Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ ի Հայրապետութեան Տեառն Տեառն Ներսիսի սրբազանակատար կաթուղիկոսի Ամենայն Հայոց։ Թիֆլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1856 թ., 332 էջ։ Խորհրդատետր սրբազան պատարագի։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1860 թ., 31 գծափակ էջ։ Նոր Կտակարան Սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1863 թ., 601 էջ։

[5] **Մատթէոս Կոստանդնուպոլսեցի**, Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ։ Բ տիպ։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1856 թ., 492 էջ։ **Մատթէոս կաթողիկոս**, Հանդիսարան ուղղափառութեան հայոց եկեղեցւոյ։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1860 թ, 439 էջ։

[6] **Մատթէոս կաթողիկոս**, Բարի մարդ եւ բարի քրիստոնեայ։ Երկրորդ տպ.։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1860 թ., 273 էջ։

ներից իւրաքանչիւրը XIX դարի կէսերին Թիֆլիսում յայտնի հայ մտաւորականներ էին, ազգի հոգսերով ապրող մարդիկ։

*Յակոբ Կարենեանցը հայերէն առաջին «Կովկաս» թերթի խմբագիրներից մէկն էր։ 1857 թուականին նա հրատարակել է «**Պատմութիւն եւ պատճառք վերադարձի երից վարդապետաց Հայոց Սարգսի, Գաբրիէլի եւ Ամբրոսեայ ընդ հովանեաւ Լուսաւորչական Սուրբ Աթոռոյ Հայաստանեայց եկեղեցւոյ**»[7]։ Այս 48 էջանոց գրքում տրուել է երեք յայտնի հայ հոգեւոր գործիչների, Մխիթարեան միաբանութեան անդամներ Սարգիս Թէոդորեանի, Գաբրիէլ Այվազեանի եւ Ամբրոսեայ Գալֆայեանի պատմութիւնը։ Վերջիններս 1856 թուականին գժտուել էին իրենց կաթոլիկ գործընկերների հետ եւ վերադարձել էին Հայոց Առաքելական եկեղեցու գիրկը։ Համոզուած ենք, որ նոյն տարում՝ 1857 թուականին Համբարձում Էնֆիաճեանցի տպարանում տպագրուած «**Վերադարձ երից վարդապետաց Սարգսի Թէոդորեան, Գաբրիէլի Այվազեան և Ամբրոսեայ Գալֆայեան ի ծոց լուսաւորչական Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ**» գրքի հեղինակը եւս Յակովբ Կարենեանցն է, այդ է վկայում նաեւ Ներսիսեան հոգեւոր դպրոցի տպարանում տպագրուած գրքի «*Կրկին տպագրեալ ի 1857 ամի*» ծանուցումը։*

*Յակովբ Կարենեանցը աւելի վաղ՝ 1841 թուականին հրատարակած «**Ճառ վասն փրկագործ չարչարանց և խաճելութեան տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի**»[8] գրքում Աւետարանի չորս աւետարանիչների հատուածների քննութեամբ մեկնաբանել է թէ ինչպէս է Յիսուս Քրիստոսը մարդկութեան մեղքերն առնելով իր վրայ բարձրացել խաչին։*

Յակոբ եւ Դաւիթ Արզանեանց Եղբայրների Տպարան

*Լազարեան ճեմարանը ոսկէ մետալով աւարտած եղբայրները հոգեւոր լուրջ կրթութիւն էին ստացել եւ Հայ Առաքելական կրօնի բացարձակ գիտելիքներ էին կուտակել։ Մոսկուայի համալսարանի պատմալեզուագրական բաժինն աւարտելով վերջնականապէս հաստատուել էին Թիֆլիսում եւ մանկավարժութիւնը դարձրել իրենց հիմնական գործը։ Հիմնելով սեփական տպարան, այլ գրքերի թւում հրատարակել են հոգեւոր գրքեր։ Դրանցից է «**Կրթութիւն աւետարանական՝ ի պէտս Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ**»[9] գիրքը։ Ամենայն հաւանականութեամբ գրքի հեղինակները հէնց Արզանեանց եղբայրներն են, որ համառօտակի ներկայացրել են Աւետարանի պատմութիւնը։*

Տէր Գաբրիէլ Քահանայ Պատկանեանցի Տպարան[10]

*Տպարանի առաջին արգասիքը 16 էջանոց «**Համառօտ հրահանգ քրիստոնէական հաւատոյ**»[11] գիրքն է։ Ամիսներ անց Տէր Գաբրիէլ քահանան հովանաւոր է գտել եւ նուի-*

---

[7] **Յակոբ Կարենեանց**, Պատմութիւն եւ պատճառք վերադարձի երից վարդապետաց Հայոց Սարգսի, Գաբրիէլի եւ Ամբրոսեայ ընդ հովանեաւ Լուսաւորչական Սուրբ Աթոռոյ Հայաստանեայց եկեղեցւոյ։ Կրկին տպագրեալ ի 1857 ամի։ Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1857 թ.։ 48 էջ։

[8] **Յակոբ Կարենեանց**, Ճառ վասն փրկագործ չարչարանց և խաճելութեան տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ …Յաշխարհիկ բարբառ, աշխատասիրութեամբ Կարնոյ գաղթական Յակոբայ Կարենեանց։ Թիֆլիս, տպ. Հոգեւոր Դպրոցի Հայոց, 1841 թ.. 23 էջ։

[9] **Կրթութիւն աւետարանական՝ ի պէտս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ**։ Տփխիս, տպ. Յակովբ եւ Դաւիթ Արզանեանցների, 1839 թ., 40 էջ։

[10] **Երուանդ Շահազիզ**, Տէր Գաբրիէլ Պատկանեանց (արտագր. «Լումայ»-ից), Թիֆլիս, Ելեկտրաշարժ տպարանի օրիորդ Ն. Աղամեանցի, 1910 թ., էջ 85-86։

[11] **Համառօտ հրահանգ քրիստոնէական հաւատոյ։ … Տիպ առաջին**, Թիֆլիս, տպ. Գաբրիէլ Պատկանեանի, 1850 թ., 16 էջ։

բատուական գրութեամբ գիրքը 1850 թուականի Օգոստոսին երկրորդ անգամ հրատարակել է[12]։

Յակովբ Գրիգորեան Արզումանեանցի Տպարան

Յակոբ Գրգորեան Արզումանեանցի տպարանում հոգեւոր բնոյթի վեց հրատարակութիւն է իրականացուել։ Այստեղ հեղինակային գրքեր չեն տպագրուել, իսկ այն ինչ տպագրուել է թերեւս տպարանատիրոջ կողմից են իրականացուել։ Տպագրուած գրքերից մէկը՝ Աղօթամատոյցի տպագրութիւնը իրականացուել է «արդեամբք և ծախիւք Ելիսաւետպոլցի Յովհաննէս դպիր Տէր Աբրահամեան Տէր Յովհաննէսեանց»-ի[13]։

Համբարձում Էնֆիաճեանցի Տպարան

*Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցու երկերը այս տպարանում եւս տպագրուել ու ներկայացուել են հասարակութեանը։ Դեռեւս 1842 թուականին Վեհը Զմիւռնիայում տպագրել է «**Խորհրդածութիւն շնորհաց եւ նշանաց խորհրդոյ Քրիստոսական Սուրբ եկեղեցվոյ ի պէտս ուղղափառ մանկանց նորին**» գրաբար գիրքը։ Այն ներկայացրել է քրիստոնէական վարդապետութեան ընդհանուր սկզբունքները, պարզաբանել նաեւ Հայ եկեղեցու դաւանանքը, նշել, որ այն առաւել անաղարտ է ու հարազատ վաղ քրիստոնէութեան սկզբունքներին։ 1863 թուականին գիրքը վերահրատարակուել է Համբարձում Էնֆիաճեանցի տպարանում[14]։ Մատթէոս կաթողիկոսը եղել է Հայ եկեղեցու ամենահետեւողական պաշտպաններից եւ ջատագովներից մէկը, անհաշտ պայքար է մղել արեւմտահայ (որպէս Կ. Պոլսի Հայոց պատրիարք) եւ արեւելահայ (որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս) բողոքականների, նաեւ հայ կաթոլիկների ու պապականութեան ձգտումների դէմ։ Հէնց այդ սկզբունքներն են ներկայացրել նրա հրատարակած յաջորդ երկու գրքերը՝ «**Հայելի աստուածային շնորհաց։ Գրաբառ, յօրինեալ ի Սուրբ Էջմիածին**» եւ «**Դիտողութիւն ճշմարտութեան Ս. Աւետարանին Յիսուսի Քրիստոսի**»[15]։*

*Կարեւոր հրատարակութիւն էին Պետրոս Սիմէօնեանցի «**Սրբազան պատմութիւն Հին[16] և Նոր[17] կտակարանի հայ տղայոց եւ աղջկանց համար**» երկու հատորները։ Սկզբում տպագրուել է Բ. (Նոր կտակարան) հատորը, ապա մէկ տարի անց՝ 1863 թուա-*

---

[12] Տպագրուել է Տփխիսի պատուանուն քաղաքացի Աղա Աւետիք Տէր-Մկրտչեանցի հովանաւորութեամբ։

[13] **Համառօտ կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ**, Թիֆլիս, տպ. Յակովբ Գրիգորեան Արզումանեանցի, 1855 թ., 248 էջ։ **Աղօթամատոյց**, Թիֆլիս, տպ. Յակովբ Գրիգորեան Արզումանեանցի, 1856 թ., 134 զարդափակ էջ։ **Գիրք աղօթից վասն ամենայն ցեղ պատահարաց, որք գան ի վերայ մարդոյն**, Թիֆլիս, տպ. Յակովբ Գրիգորեան Արզումանեանցի, 1856 թ., 115 էջ։ **Համառօտ պատմութիւն Հայոց եկեղեցւոյ**, Թիֆլիզ, տպ. Յակովբ Գրիգորեան Արզումանեանցի, 1856 թ., 48 էջ։ **Հին եւ Նոր կտակարանի համառօտ պատմութիւն նորահաս մանկանց համար**, Մաս առաջին, Հին կտակարանի պատմութիւն, Թիֆլիս, տպ. Յակովբ Գրիգորեան Արզումանեանցի, 1856 թ., 28 էջ։ **Հին եւ Նոր կտակարանի համառօտ պատմութիւն նորահաս մանկանց համար**, Մաս երկրորդ, Նոր կտակարանի պատմութիւն, Թիֆլիս, տպ. Յակովբ Գրիգորեան Արզումանեանցի, 1856 թ., 37 էջ։

[14] **Մատթէոս կաթողիկոս**, Խորհրդածութիւն շնորհաց եւ նշանաց խորհրդոյ Քրիստոսական Սուրբ եկեղեցւոյ ի պէտս ուղղափառ մանկանց նորին, Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի, 1863 թ., 161 էջ։

[15] **Մատթէոս կաթողիկոս**, Հայելի աստուածային շնորհաց, Գրաբառ, յօրինեալ ի Սուրբ Էջմիածին, Թիֆլիս, տպ. Գաբրիէլ Մելիումեանցի եւ Համբարձում Էնֆիաճեանցի, 1862 թ., 171 էջ։ **Մատթէոս կաթողիկոս**, Դիտողութիւն ճշմարտութեան Ս. Աւետարանին Յիսուսի Քրիստոսի, Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի, 1863 թ., 44 էջ։

[16] **Սիմէօնեանց Պ[ետրոս]**, Սրբազան պատմութիւն Նոր կտակարանի հայ տղայոց եւ աղջկանց համար։ Հտ. Ա., Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի, 1863 թ., 236 էջ։

[17] **Պ. Ս. [Պետրոս Սիմէօնեանց]**, Սրբազան պատմութիւն հայ տղայոց եւ աղջկանց համար։ Հատոր Բ., Թիֆլիզ, տպ. Գաբրիէլ Մելիումեանցի եւ Համբարձում Էնֆիաճեանցի, 1862 թ., 240 էջ։ Գինը՝ 1 ռուբլի արծաթ։

կանին Ա. (Հին կտակարան) հատորը։ 236 էջի վրայ ամբողջովին վերապատմուել է Հին կտակարանը՝ Աստուածաշունչը՝ սկսած Ջրհեղեղի պատմութիւնից, Դրախտից, Ադամի եւ Եւայի պատմութիւնից մինչեւ վերջին Փրկչի ակնկալութիւնը գլուխը։ Նոր կտակարանը Աւետարանների եւ աւետարանիչների պատմութիւնն է։ Գրքերի լեզուն պարզ, հասկանալի աշխարհաբարն է, տառատեսակը լաւ ընթեռնելի շղագիրը։

*Այս տպարանում հեղինակային միակ գիրքը Գրիգոր Մարկոսեանցի «**Մանր ուսմունք քրիստոնէական հաւատոյ եւ սրբազան պատմութեան աւետարանի**»[18] գիրքն է։ Հեղինակը ներկայացրել է միջնադարեան երգչածիսական տարածում ստացած ժողովածոները, որոնք առաւել բարդ ոճի հոգեւոր երգեր ձեռնարկներ են։*

Տպարանը հրատարակել է Աստուածաշունչ երեխաների համար, Ժամգիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Պատմութիւն Աստուածաշունչ Հին գրոց, Նոր գրոց, Սաղմոս Դաւթի, Աւետարան ճաշու եւ Հռոմէական եկեղեցու մասին[19]։

Ամփոփում

Թիֆլիսի հայկական հինգ տպարանները 1824-1870 թուականներին իրենց տպագրութիւններով նպաստել են բնակչութեան հոգեւոր դաստիարակութեան գործին։ Այդ տարիներին տպարանները տպագրել են աւելի քան 70 անուն հոգեւոր գրականութիւն։ Տպագրուել են Աստուածաշունչ, Աւետարան, դրանց մեկնաբանութիւններ, Ժամագիրք, Ճաշոց, Աղօթագիրք, Սաղմոս, այլ գրականութիւն։ Տպագրուել են Ամենայն Հայոց կաթողիկոսներ Ներսէս Ե. Աշտարակեցու, Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցու հեղինակած գործեր, բազմաթիւ եկեղեցականների մեկնութիւններ։

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

Խ. Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի տնօրէն, Բնութեան եւ հասարակութեան մասին գիտութիւնների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, Մոսկուայի Ազգային անվտանգութեան հիմնախնդիրների միջազգային ակադեմիայի գեներալ-մայոր, դոկտոր

ՏԻՐՈՒՀԻ ՍԻՐԵԿԱՆԵԱՆ

Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ Հայոց պատմութեան ամպիոնի հայցորդ

---

[18] **Մարկոսեան Գրիգոր**, Մանր ուսմունք քրիստոնէական հաւատոյ եւ սրբազան պատմութեան աւետարանի։ Թիֆլիս, տպ. Համբարձում էնֆիաճեանցի, 1865 թ., 134 էջ։

[19] **Աստուածաշունչ երեխեքանց ընթերցանութեան, Ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնի Տ. Տ. Մատթէոս աստուածընտիր կաթողիկոսի Ամենայն Հայոց**, Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելիումեանցի եւ Համբարձում էնֆիաճեանցի, 1860, 66։ **Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկողեցւոյ, արարեալ սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ եւ երանելի հայրապետացն մերոց Գիւտոյ եւ Յոհաննու Մանդակունւոյ եւ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ**, Թիֆլիս, տպ. Համբարձում էնֆիաճեանցի, 1865 թ., ՌՅԺԴ, 720 էջ։ **Պատմութիւն Աստուածաշունչ գրոց Հին կտակարանի**, Ի պէտս աշակերտաց եւ աշակերտուհեաց, Համառօտեալ՝ Յ. Ա. Ք. Օ., 2-րդ տպ. Յաւելեալ եւ ընդարձակեալ, Թիֆլիս, տպ. Համբարձում էնֆիաճեանցի, 1865 թ., 122 էջ։ **Պատմութիւն Աստուածաշունչ գրոց Նոր կտակարանի**, Զորս աւետարանիչներից հաւաքած, Աշխատասիր.՝ Յ. Ք. Օ., Մաս Ա.։ Թիֆլիս, տպ. Համբարձում էնֆիաճեանցի, 1865 թ., 135 էջ։ Սաղմոս երջանիկ Մարգարեին Դաւթի, Թիֆլիս, տպ. Համբարձում էնֆիաճեանցի, 1865 թ., 49 էջ։ Աւետարան ճաշու եւ տօնք իւրաքանչիւր աւուրց ի բոլոր տարվոջն ըստ նորոյ Տօնացուցիւ։ Թիֆլիս, տպ. Համբարձում էնֆիաճեանցի, 1867 թ., 278 էջ։ Քանի մը խօսք Հռոմէական եկեղեցւոյ գլխաւորութեան մասին, Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելիումեանցի եւ Համբարձում էնֆիաճեանցի, 1861 թ., 51 էջ։